րոց անկցի 'ի կարգէ աստիճանէ, նոյն աւուրն երկրորդ դատաւորն գոցի պատրաստ և տացի իշխանութիւն երրորդի իւրոյ, զի մնացորդ դատաւորն ունիցի իշխանութիւն տալոյ իշխանական գաւազանի, զի շառաւիղ իշխանութեանս մի՛ անջատեսցի։

ԳԼՈՒԽ ՅԱ.

Պարտ է ամենայն զօրապետաց զի լինիցին պատրաստ 'ի պահակս իւրեանց, ամենայն երեկոյեան շաբաթոյ արասցէ ընթեռնուլ յօրէնս զինուորութեան 'ի մէջ բանակի, և 'ի յունկս զինուորաց իւրոց։

ԳԼՈՒԽ ՅԲ.

Պարտ է ամենայն զօրագլուխ 'ի ամենայն ամսի յանկարծակի թուաբանել զօրս բանակի իւրոյ, եթէ գուցէ գոցի պակաս թուաւ 'ի վերայ թղթոյ գրեցեալ պակասութիւն հանդերձ պատճառօքն ընծայեսցէ 'ի սպասս սպարապետին իւրոյ։

ԳԼՈՒԽ ՅԳ.

Պարտ է ամենայն զօրագլուխ 'ի ամենայն տեղի երեսս երկրի պահակաց պատրաստի զօրաց ամենայն երեկոյեան ժամու աչօք տեսանել